

Ի՞ՆՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ԲԺՇԿԻՆ

Օգտակար տեղեկություններ բժշկի խորհրդատվությունից
առաջ, հանդիպման ընթացքում և դրանից հետո



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

03

- ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏՈՒՄ
- ՀԱՆԴԻՊՈՒՄ

04

- ՄԻ ԱՄԱՂԵՔ ՀԱՐՑԵՐ
- ՏԱԼՈՒՑ

05

- ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ
- ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ

06

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

07

- ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

08

- ԶԻՄԻԱԹԵՐԱԴՊԻԱ

09

- ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ
- ԹԵՐԱԴՊԻԱ

10

- ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԹԵՐԱԴՊԻԱ, ՄՈՆՈԿԼՈՆԱԼ
- ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐ, ԻՄՈՒՆԱԹԵՐԱԴՊԻԱ
- ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

11

- ԴԻԵՏԱ ԵՎ ՍՆՈՒՑՈՒՄ

12

- ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ /
- ՕՐԹՈՍՈԼԵԿՈՒԼՅԱՐ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ
- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ/ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ
- ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏՈՒՄ

- ☐ Պատրաստվեք, որ կկարողանաք հստակ նկարագրել Ձեր ախտանշաններն ու վիճակը: (Ինչպե՞ս եք Ձեզ գգում: Ցավեր ունե՞ք: Ո՞ր հատվածում եք ցավ գգում:)
- ☐ Ձեր հարցերը նախապես մտածեք և գրի առեք:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

- ☐ Խնդրեք ընկերոջը կամ ընտանիքի անդամներից որևէ մեկին ուղեկցել Ձեզ (երկուսով ավելի շատ տեղեկություններ կմտապահեք և ավելի լավ կընկալեք):
- ☐ Նշումներ կատարեք կամ հեռախոսով ձայնագրելու թույլտվություն հարցրեք:
- ☐ Խոսեք Ձեր ախտանշանների և ցավի մասին. պետք չէ ենթադրել, թե այն, ինչ գգում եք, «նորմալ» է:
- ☐ Բժշկի ասածը կրկնեք Ձեր բառերով (“ճիշտ եմ Ձեզ հասկանում, որ...”): Սա լավագույն ձևն է վստահ լինելու, որ ճիշտ եք հասկացել:
- ☐ Բաց և շիտակ խոսեք Ձեր մտահոգությունների մասին: Ձեր և մտերիմների զգացողությունները շատ կարևոր են:
- ☐ Նախքան որևէ կարևոր որոշում կայացնելը մտածելու համար լրացուցիչ ժամանակ խնդրեք:
- ☐ Տեղեկացեք պացիենտական կազմակերպությունների մասին, որոնք ինչ-որ կերպ կարող են աջակցել, կամ որտեղ և ինչպես գտնել հիվանդության և բուժման մասին մանրամասն տեղեկություններ:



ՄԻ ԱՄԱՉԵՔ ՀԱՐՑԵՐ ՏԱԼՈՒՑ

Եթե որևէ բան չեք հասկանում, օրինակ՝ բժշկական տերմիններ, ապա բացատրություն խնդրեք:

- ☐ Ի՞նչ ընտրության հնարավորություն ունեմ: Որո՞նք են ինձ հարմար տարբերակները: Որո՞նք են դրանց առավելություններն ու թերությունները: Ինչպե՞ս այդ առավելություններն ու թերությունները կանդրադառնան ինձ վրա: Ինչպիսի՞ն է երկարաժամկետ հեռանկարը:
- ☐ Արդյոք առկա՞ է վիրահատության տարբերակը:
- ☐ Որո՞նք են բուժման հետագա քայլերը:
- ☐ Որո՞նք են բուժմանն առնչվող ռիսկերը:
- ☐ Ի՞նչ տեղի կունենա, եթե հրաժարվեմ բուժման այս տարբերակից:
- ☐ Արդյո՞ք իմ դեպքը քննարկվել է բժիշկների թիմի կողմից: Արդյո՞ք ես կունանամ իմ ուռուցքաբանական թիմը*: Ես մասնակցելու՞ եմ այդ թիմի քննարկումներին: Եթե ոչ, ապա ե՞րբ և ինչպե՞ս եմ տեղեկանալու այդ թիմի կայացրած որոշումներին:
- ☐ Որքա՞ն հաճախ եք այս տեսակի քաղցկեղ բուժում:
- ☐ Որո՞նք են ապագայի հետ կապված մտահոգությունները (օրինակ՝ առողջություն, սեռական կյանք, աշխատանք, սպորտային կյանք, կանաչիություն, կյանքի որակ և այլն):
- ☐ Կարո՞ղ եք տանը կարդալու համար ավելի մանրամասն տեղեկություններ / հղումներ / գրքույկներ տրամադրել:
- ☐ Կարող եմ լաբորատոր / գործիքային հետազոտությունների արդյունքների պատճեններն ունենալ՝ թղթային կամ առցանց տարբերակով:

* Ուռուցքաբանական թիմն առողջապահական ոլորտի տարբեր մասնագետների խումբ է, որոնք միասին քննարկում են հիվանդների առանձին դեպքերը՝ որոշելու բուժման լավագույն տարբերակները և պլանավորելու դրանց իրականացումը: Ուռուցքաբանական թիմի կազմում կարող են ընգրկվել, օրինակ, գինեկոլոգը, ուռուցքաբանը, վիրաբույժը, ճառագայթաբանը, հոգեբանը, գենետիկը, ուռուցքաբանական բուժքույրը և այլ մասնագետներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ

- ☐ Ստացած տեղեկությունների մասին խոսեք Ձեր ընտանիքի անդամների՝ ամուսնու, ծնողների, հասուն երեխաների կամ ընկերների հետ: Փոխանցեք նրանց լրացուցիչ տեղեկատվությամբ Ձեր ունեցած նյութերը, քանի որ նրանք նույնպես հարցեր կունենան:
- ☐ Եթե երկրորդ բժշկական կարծիքի անհրաժեշտություն էք զգում, ապա անալայման ստացեք այն: Ապահովագրական փաթեթ ունենալու դեպքում անալայման ճշտեք փոխհատուցվող ծախսերի վերաբերյալ:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ

- ☐ Վստահեք Ձեր ինտուիցիային: Երբեք մի՛ կայացրեք այնպիսի որոշում, որին ամբողջապես չեք վստահում:
- ☐ Միայն Դուք կարող եք որոշում կայացնել Ձեր կյանքի վերաբերյալ, ուստի միայն Դուք կարող եք որոշում կայացնել Ձեր բուժման վերաբերյալ: Մասնագետը Ձեզ համար որոշում կկայացնի միայն եթե Դուք նրան խնդրեք դրա մասին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

- ☐ Ինձ մոտ ախտորոշված քաղցկեղը բուժելի՞ է:
- ☐ Ինչպիսի՞ն է կանխատեսումը:
- ☐ Արդյո՞ք այն ժառանգական է:
- ☐ Արդյո՞ք կվերակազմվեմ այս բուժումից հետո:
- ☐ Ե՞րբ կիմանամ՝ արդյոք արդեն բուժվել եմ, թե՞ դեռ ոչ:
- ☐ Ի՞նչ տեղի կունենա, եթե/երբ քաղցկեղը կրկնվի:
- ☐ Բուժման ի՞նչ տարբերականեր կան կրկնվող քաղցկեղի դեպքում:
- ☐ Ինչպիսի՞ն կլինի իմ կյանքի որակը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ առումով:
- ☐ Բուժման ընթացքում կկարողանամ աշխատել, մարզվել, ճամփորդել կամ ընտանիքիս այցելել:
- ☐ Ո՞րն է հետագա հսկողության պլանը:
- ☐ Արդյո՞ք ինձ բուժելու է բազմամասնագիտական թիմը:
- ☐ Ո՞վ է լինելու իմ վերահսկող մասնագետը:
- ☐ Արդյո՞ք պետք է դիմեմ սննդաբանի՝ հատուկ սննդակարգի վերաբերյալ:
- ☐ Արդյո՞ք այս ծախսը փոխհատուցվում է ապահովագրության կողմից:
- ☐ Ու՞մ կարող եմ հարցեր հղել ժառանգականության վերաբերյալ:
- ☐ Կա՞ սոցիալական և հոգեբանական աջակցություն՝ լրացուցիչ օգնություն ստանալու այն հարցերի վերաբերյալ, որոնց առնչվում եմ (կամ կառնչվեմ):
- ☐ Արդյո՞ք սա փոխհատուցվում է ապահովագրության կողմից:
- ☐ Երեխաներիս ինչպե՞ս ասեմ իմ հիվանդության մասին:
- ☐ Կարո՞ղ եմ սեռական հարաբերություն ունենալ: Եթե այո, ե՞րբ: Որքանով այն կտարբերվի նախկինից:
- ☐ Ինչպե՞ս կարող եմ սպիացած հյուսվածքն ազդել իմ օրգանների և կյանքի որակի վրա:
- ☐ Բուժումից հետո բոլո՞ր պացիենտներն են ունենում սպիացած հյուսվածք:
- ☐ Ի՞նչ կարող եմ անել՝ բուժման ընթացքում ինձ լավ վիճակում պահելու համար:
- ☐ Ի՞նչ կարող եմ անել՝ բուժումից հետո ֆիզիկական վիճակս վերականգնելու համար:
- ☐ Ի՞նչ գիտեք կենսաբանական / կոմպլեմենտար բուժման մասին:

ՎԻՐԱՅԱՏՈՒԹՅՈՒՆ

- ☐ Արդյո՞ք վիրահատությունը միակ տարբերակն է:
- ☐ Որքա՞ն հաճախ է այս հիվանդանոցում կատարվում նման վիրահատություն:
- ☐ Ո՞վ է լինելու վիրահատություն կատարող վիրաբույժը:
- ☐ Որքա՞ն հաճախ եք նախկինում կատարել նման վիրահատություն:
- ☐ Ինչպիսի՞ ռիսկեր և առավելություններ կան:
- ☐ Ինչպիսի՞ բարդություններ կարող են առաջանալ՝ կարճ և երկարաժամկետ առումով:
- ☐ Որքա՞ն երկար կմնամ հիվանդանոցում:
- ☐ Ինչպե՞ս նախապատրաստվեմ վիրահատությանը:
- ☐ Արդյո՞ք տանը լրացուցիչ օգնության կարիք կունենամ:
- ☐ Որքա՞ն ժամանակ կպահանջվի վերականգնվելու համար:
- ☐ Արդյո՞ք դա կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:



ՔԻՄԻԱԹԵՐԱՊԻԱ

- ☐ Ինչպե՞ս կարող եմ պատրաստվել քիմիաթերապիային:
- ☐ Ինչու՞ է ինձ անհրաժեշտ քիմիաթերապիան վիրահատությունից առաջ/հետո:
- ☐ Որո՞նք են կողմնակի ազդեցությունները կարճ և երկարաժամկետ առումով:
- ☐ Արդյո՞ք ինձ վատ կզգամ դրանից:
- ☐ Արդյո՞ք կկարողանամ ամբողջովին վերականգնվել քիմիաթերապիայից:
- ☐ Արդյո՞ք այն կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:
- ☐ Մազերս կթափվե՞ն: Հնարավո՞ր է դա կանխել:
- ☐ Քիմիաթերապիայի ժամանակ պե՞տք են որևէ լրացուցիչ նախազգուշական միջոցներ:
- ☐ Կկարողանա՞մ շարունակել հոգ տանել իմ երեխաներին, կատարել իմ տնային գործերը:
- ☐ Կարո՞ղ եմ շարունակել աշխատել:
- ☐ Կա՞ որևէ այլընտրանք:
- ☐ Արդյո՞ք կան քիմիաթերապիայի տարբեր տեսակներ: Որո՞նք են առավելություններն ու թերությունները:
- ☐ Արդյո՞ք ինձ մոտ ախտորոշված գոյացության գենետիկ բնույթին համապատասխանող հատուկ քիմիաթերապևտիկ դեղ եք ընտրում:
- ☐ Արդյո՞ք բոլոր կանայք, ում մոտ ախտորոշվել է նույն տիպի քաղցկեղ, ունեն քիմիաթերապիայի կարիք:
- ☐ Ես պետք է անցնեմ քիմիաթերապիայի բոլո՞ր սեանսները, նույնիսկ եթե այն տկարացնի ինձ:
- ☐ Իսկ եթե օրգանիզմս չդիմանա՞ քիմիաթերապիայի այս տեսակին:
- ☐ Կարո՞ղ եմ բուժումից առաջ և դրա ընթացքում վիտամիններ կամ այլ սնուցող հավելումներ ընդունել:

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԹԵՐԱԴԻԱ

- ☐ Ինչու՞ է ինձ անհրաժեշտ ճառագայթային թերապիան (վիրահատությունից առաջ/հետո):
- ☐ Որո՞նք են կողմնակի ազդեցությունները: Դրանք կարճաժամկետ, թե՞ երկարաժամկետ բնույթ ունեն:
- ☐ Արդյո՞ք դա կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:
- ☐ Ինչպե՞ս կարող եմ պատրաստվել ճառագայթային թերապիային:
- ☐ Արդյո՞ք լիարժեք կվերականգնվեմ:
- ☐ Այն ցավո՞ւտ է:
- ☐ Ո՞րն է տարբերությունը սովորական ճառագայթային թերապիայի և բրաքիթերապիայի միջև:
- ☐ Ինչպե՞ս և ե՞րբ կպարզվի, արդյոք թերապիան հաջող է ընթացել:
- ☐ Արդյո՞ք բոլոր կանայք, ում մոտ ախտորոշվել է նույն տիպի քաղցկեղ, ունեն ճառագայթային թերապիայի կարիք:
- ☐ Կկարողանա՞մ շարունակել հոգ տանել իմ երեխաներին, կատարել իմ տնային գործերը:
- ☐ Կարո՞ղ եմ շարունակել աշխատել:

ԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆ ԹԵՐԱՊԻԱ, ՄՈՆՈԿԼՈՆԱԼ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐ, ԻՄՈՒՆԱԹԵՐԱՊԻԱ

- ☐ Ի՞նչ է կենսաբանական թերապիան:
- ☐ Ո՞րն է տարբերությունն իմունաթերապիայի և մոնոկլոնալ թերապիայի միջև:
- ☐ Իմ քաղցկեղի տեսակին համապատասխան կենսաբանական թերապիա կա՞:
- ☐ Ինչպիսի՞ կողմնակի ազդեցություններ պետք է ակնկալեմ կարճաժամկետ և երկարաժամկետ առումով:
- ☐ Դա ինձ կբուժի՞:
- ☐ Դրանից հետո լիարժեք կապաքինվե՞մ:
- ☐ Արդյո՞ք դա կազդի իմ պտղաբերության/հորմոնալ վիճակի/սեռական կյանքի վրա:
- ☐ Արդյո՞ք հաստատված է, որ այս բուժումն արդյունավետ է:
- ☐ Կկարողանամ շարունակել հոգ տանել իմ երեխաներին, կատարել իմ տնային գործերը:
- ☐ Կարո՞ղ եմ շարունակել աշխատել:
- ☐ Որո՞նք են ռիսկերը:
- ☐ Որքա՞ն հաճախ է այս հիվանդանոցում կիրառվում թերապիայի այս տեսակը:
- ☐ Կարո՞ղ եմ բուժումից առաջ և դրա ընթացքում վիտամիններ կամ այլ մնուցող հավելումներ ընդունել:

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

- ☐ Ի՞նչ է կլինիկական փորձարկումը:
- ☐ Իմ հիվանդության առնչությամբ կա՞ն կլինիկական փորձարկումներ:
- ☐ Հիվանդանոցը մասնակցու՞մ է ինձ համապատասխանող կլինիկական փորձարկման:
- ☐ Կարո՞ղ եք ինձ օգնել՝ գտնելու կլինիկական փորձարկում, որում ես կարող եմ ընդգրկվել:
- ☐ Կկարողանամ շարունակել դեղերի ընդունումը կլինիկական փորձարկման ավարտից հետո:
- ☐ Ինձ կտեղեկացնե՞ն կլինիկական փորձարկման արդյունքների մասին:
- ☐ Կարո՞ղ եմ որոշել ցանկացած պահի լքել կլինիկական փորձարկումը:?
- ☐ Որքա՞ն ռիսկային է դա:

ԴԻԵՏԱ ԵՎ ՍՆՈՒՑՈՒՄ

- ☐ Կարո՞ղ եմ սննդաբանի խորհրդատվության ուղեգիր ստանալ:
- ☐ Արդյո՞ք սննդաբանի խորհրդատվությունը փոխհատուցվում է ապահովագրությամբ:
- ☐ Ի՞նչ պետք է ուտեմ բուժումից կամ քիմիաթերապիայից առաջ կամ դրա ընթացքում:
- ☐ Լրացուցիչ սպիտակուցների կարիք ունե՞մ:
- ☐ Ի՞նչ պետք է ուտեմ բուժումից հետո՝ ուժերս հավաքելու համար:
- ☐ Ի՞նչ պետք է ուտեմ ռեմիսիայի ընթացքում՝ առողջությունս պահպանելու համար:
- ☐ Շաքարը/ալկոհոլը/(մշակում անցած) միսը վնասակա՞ր է քաղցկեղով պացիենտի համար:
- ☐ Արդյո՞ք պետք է օրգանական սնունդ ընդունեմ:



ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ/ՕՐԹՈՄՈԼԵԿՈՒԼՅԱՐ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

- ☐ Ի՞նչ կարծիքի եք սննդային հավելումների/օրթոմոլեկուլյար բժշկության մասին:*
- ☐ Արդյո՞ք պետք է խորհրդակցեմ օրթոմոլեկուլյար բժշկության մասնագետի հետ:
- ☐ Կարո՞ղ եմ սննդային հավելումներ ընդունել:
- ☐ Սննդային հավելումները կնպաստե՞ն իմ առողջությանը/բուժմանը:
- ☐ Արդյո՞ք դրանք փոխհատուցվում են ապահովագրությամբ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ/ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

- ☐ Կա՞ պացիենտական կազմակերպություն, որի հետ կարելի է կապ հաստատել:
- ☐ Կարո՞ղ եմ ինչ-որ կերպ հանդիպել/շփվել ինձ պես պացիենտների հետ:
- ☐ Կարո՞ղ եմ հոգեբանի խորհրդատվության ուղեգիր ստանալ:
- ☐ Արդյո՞ք հոգեբանի խորհրդատվությունը փոխհատուցվում է ապահովագրությամբ:

* Օրթոմոլեկուլյար բժշկությունն այն ճյուղն է, որն ուղղված է հիվանդներին վիտամիններով, հանքանյութերով ու միկրոէլեմենտներով բուժելուն:

Լինդա Սևոեպ, ձվարանի քաղցկեղ վերապրած, Օլիյֆ, Հոլանդիա, ENGAGE-ի անդամ

«Ձվարանի քաղցկեղի (3C փուլ) բուժման ընթացքում ես վերափոխվեցի. վախից քարացած հիվանդից, որը կարծում էր, թե բժիշկն ավելի լավ գիտի ամենը, դարձա մի պացիենտ, որը սկսեց հասկանալ, որ ընտրություն ունի և իրեն վերաբերող որոշումներն ինքնուրույն պետք է կայացնի: Դա հեշտ չէր, որովհետև ինձ ոչ ոք չէր սովորեցրել դա անել, բայց, ի վերջո, իմ սեփական կյանքի տնօրինող լինելը դարձրեց ինձ ինքնավստահ պացիենտ, որի վախը նվազել էր, իսկ հիվանդության մարտահրավերներն ընդունելու կարողությունը մեծացել»:

Քիմ Հալբեր, արգանդի վզիկի քաղցկեղ վերապրած, Օլիյֆ, Հոլանդիա, ENGAGE-ի անդամ

«Երբ 2013թ-ին արգանդի վզիկի քաղցկեղ ախտորոշվեց, ես բացարձակապես գաղափար չունեի՝ ինչ է լինելու կամ անգամ ինչ հարցեր տալ բժշկին խորհրդատվության ժամանակ: Ես չգիտեի, որ կա «ուշացած կողմնակի ազդեցություններ» անունը կրող խնդիր, որի մասին ինձ նույնիսկ չէին զգուշացրել: Ուստի բուժումից հետո ես բախվեցի տհաճ անակնկալների: Ես իսկապես ամիսոսում եմ, որ այն ժամանակ ինձ հասանելի չէր այս գործիքը, քանզի դրա օգնությամբ կարող էի հարցեր տալ, օրինակ՝ հնարավոր ուշացող կողմնակի ազդեցությունների մասին: Ուրախ եմ, որ հիմա կարող եմք օգնել այլ կանանց, որոնք նույն իրավիճակում են, ինչ ես էի այն ժամանակ»:

Պրոֆեսոր, բժիշկ Մուրատ Գյուլթեկին, ուռուցքաբան գինեկոլոգ, վիրաբույժ, Թուրքիա, ESGO-ENGAGE-ի համանախագահ

«Այս գրքույկը ցույց տվեց, թե բուժումն սկսելուց որքան քիչ տեղեկություններ են բժիշկները կիսում հիվանդների հետ: Հուսով եմ, որ նշված հարցերն ու դրանց պատասխանները պարբերաբար կգնահատվեն բժիշկների կողմից նախքան իրենց պացիենտների ցանկացած տեսակի բուժումն սկսելը: Հիվանդի իրավունքն է նախքան որոշում կայացնելը հարցեր տալ և տեղեկանալ, իսկ մենք պարտավոր ենք բացատրել և հարգել նրանց մտահոգությունները»:

Իկո Թոթ, արգանդի վզիկի քաղցկեղ վերապրած, Mallow Flower հիմնադրամ, Հունգարիա, ESGO-ENGAGE-ի համանախագահ

«Մենք պե՛տք է հարցեր տանք: Մենք պետք է հարցեր տանք հանուն մեր կյանքի: Երբեմն հիվանդության ընթացքում մենք պետք է ինքնուրույն լինենք, բոլոր տեղեկությունները կարևոր են, քանի որ չգիտենք, թե դրանցից որը կարող է մեզ ճիշտ ուղղությամբ մղել: Պացիենտ լինելով՝ հարցեր տալը հեշտ չէ, ու երբեմն դա անելու համար օգնության կարիք ունենք, ոչ միայն հարցեր տալու, այլև պատասխաններն ընկալելու համար: ENGAGE-ում հուսով եմք, որ այս գրքույկը կօգնի Ձեզ հարցեր տալ, նաև կենտրոնանալ պատասխանների վրա: Երբեք մի՛ վախեցեք հարցեր տալուց. չկա վատ կամ հիմար հարց»:

**ENGAGE-ը շնորհակալություն է հայտնում հեղինակներին,
աջակիցներին և ENGAGE-ի Գործադիր խմբի
անդամներին նրանց շարունակական մասնակցության և այս
հուշաթերթիկի թարմացման աշխատանքների համար:**

**ENGAGE-ն իր երախտագիտությունն է հայտնում հեղինակներին
Քիմ Յալշեր (Յուլանդիա)
Լինդա Սնեպ (Յուլանդիա)
Իկո Թոթ (Յունգարիա)
Պրոֆեսոր, բժիշկ Սուրատ Գյուլթեկին (Թուրքիա)**

ENGAGE-ի կոնտակտային տվյալներ

**Վեբկայք՝ <https://engage.esgo.org/>
Էլ. փոստ՝ engage@esgo.org
Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/groups/155472521534076/about/>**

**ENGAGE-ը հորդորում է կապ հաստատել Ձեր
տեղական պացիենտական կազմակերպության հետ:**

«ՀԵՆԱՐԱՆ» բարեգործական հիմնադրամ

**Կայք՝ <http://henaran-fund.org/>
Էլ. հասցե՝ info@henaran-fund.org
Ֆեյսբուք՝ <https://www.facebook.com/HenaranFoundation/>**



